



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22387



1891

396
2-45

Դարձության և ժամանակին
№ 53 «Ապրիլ» եւ «Ճարագ» հանդէս. Հրատարակութիւն № 53

246

ՅԱՐ. ՂԱՐԱԳԵՈԶԵԱՆՑ

ԿՆՈՉ ԿՈՉՈՒՄԸ ԵՒ ԳԲՈՒԹԻՒՆԸ
ՀԱՍՏԱԿՈՒԹԵԱՆ ՄԵԶ

Թօ Ի Ֆ Լ ի Ս
ՏՊԱՐԱՆ ԱՐՕՐԱ Տ. ԱԱԶԱՐԵԱՆԻ
ԳՈԼՈՎԻՆ պր. և բարեկառը. վող, տմկան:

1891

2010

396
745

№ 53 «Աղբուր» եւ «Ճարագ» հանդէս. հրատարակութիւն № 53

ՅԱՐ. ՂԱՐԱԳԵԶԵԱՆՑ

300
1469-ՂԱ

ԿՆՈՋ ԿՈՉՈՒՄԸ ԵԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ
ՀԱՍՏԱԿՈՒԹԵԱՆ ՄԵԶ

(1911) (1903)

15728-58



32090 - Կ. հ.

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“ 8. ՆԱԶԱՐԵԱՆԻ

ԳՈՒՅԱՆ ԿՈ, ԷՎ ԽԱՐԵՎԱՆԻ, ԳՈՂ, ԽԵՂԻՆ:

2

1891

ՅՈՒԹՈՒԹՅՈՒՆ ԱՅՍԻ

ԶԻՒ ՅՈՒԴՅՈՒԹՅՈՒՆ

2002

Դօվ. Շեն. Տիֆլիս, 2 սեպտեմբեր 1891 թագ

Տիպ. Արօր. Տ. յ. Նազարյան պ. Գոլ. ք. և Բար. աւ.

Հայոց հայութեաց դաստի կը մը պահապահած
ուղղված քաղաքական համարական հայութէ առաջ
աշխարհ ուստի առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ
առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ

ՄԵՆՔ կնոջ կոչման մասին խօսելով հասարակութեան
մէջ՝ յաւակինութիւն չենք ունեցել նրա ընդարձակ նշանակու-
թեան վերաբերմամբ լիովին գաղափար տալու, քանի որ
դա ներկայ յառաջադիմող ազգերի քաղաքակրթութեան
պատմութեան մէջ կարելի է ասել՝ մի առանձին գրա-
կանութիւն է կազմում. այս նա, եթե ամենանուրբ մտա-
ւոր ընդունակութիւնների, երեւ ակայտութեան տէր անհատ,
եթէ կամենայ, փոխանակ անգործունէութեան մատնեե-
լու ընտանելան նեղ պատերում, որպէս խաղալիք, կա-
րող է ազգութեան գաղափարի բարգաւաճմանը և լու-
սաւորութեան գլխաւոր կարստերը լինել: Աւստի, այս
գէպքում մենք կարեիք չենք ունեցել երկար խօսել կնոջ
շատ բարեմասնութիւնների ու պաշտօնակատարութեանց
մասին հասարակական կեանքում, որովհետեւ եթէ նա
բարձր ընդունակութիւններով օժտւած անհատ է, ուրեմն
պիտի ունենայ նաև գէպէ հասարակութիւնը կամ ազգը
որոշ պարտականութիւններ և իրաւոնք, այլապէս նրա
գոյութիւնը համայքի մէջ միակողմանի կը լինէ, որի
կետեանքն է անգործունէութիւնը ու յիտամնացութիւնը
շատ բաներում: Եթէ հաշտւենք այն մտքի հետ, որ մարդ-
կութեան մտաւոր և բարոյական յառաջադիմութիւնը
կախւած է տեսակ տեսակ ազգութիւնների նոյնանման
զարգացման յառաջադիմութիւնից, նրա ազատութիւնը
կախւած է ազգերի ազատութիւնից, այն ժամանակ և
կը որոշի կնոջ գաղափարական կոչումն ու պարտակա-
նութիւնը գէպէ հասարակութիւնը, նրա համահաւասար

իրաւունքները ազգի կեանքի բոլոր շրջաններում. որովհետև կինը այս դէպքում, կարծիք է ասել, նեցուկ կարող է համարուել նրա առաջադիմութեան համար. Ներկայումս թէ Աքեմետեան և Սըսելեան Եւրոպայում զգացել են, որ կանանց կրթութեան սիստեման այնքան համապատասխան չէ իրական կեանքի պահանջներին. այդ ուղղութեամբ բազմանում են միմիայն օրգանիզմով թոյլ, նեարդերը զատւած, արիւնասակաւ, նիշար, նեղ կօրսէտի տակ շնչւած դժոյն անհատներ, որոնք այդպիսի Փիզիքական և թէ մտաւոր կեանքի վրա:

Այժմս ձգտում են կանանց կրթութեամբ տալ աւելի բնական ու տնտեսական կեանքի անհրաժեշտ պահանջների համապատասխան բնաւորութիւն, որով ընդարձակում է նրա իրաւունքների, պարտականութեան, ձայնի, անկիեց պատով ու ցենզի սահմանները, որից կախւած է նաև նրա ազատ ու ազնիւ քաղաքացուհի լինելը. Կինն այս ժամանակ կարող է իրան ազատ համարել, երբ իր ձեռքի հալաւ աշխատանքովն է ապրում, որը տալիս է նրան ինքնուրոյնութիւն թէ ընտանիքի մթնողաւում և թէ հաս սասկակի մն շշանում: Հէնց նրա կոչումը ազգութեան մէջ նորանումն է կարանում, որ նա իբրև դաստիարակչուհի, կրթէ, լուսաւորէ իր ժամանակից մերնդին կեանքի պահանջների համապատասխան, մասնակից լինի ազգի ցաւերին և ուրախութեամբ, նրա լացին ու կոծին, այլ ոչ թէ միւսին իրա նեղ առանձնասենեակի մէջ հեղձուի և ոչ մի կդեալ չունենայ ինչպէս գիտակցութիւնից գուրկ անհատ: Նոյն իսկ ազգութիւն կոչւած համացղութիւնը ու նրա գաղափարը չի կարելի շրջանակի մէջ գնել կամ արլինով չափել, երբեւ նշան մի լայնի ժամանակաշրջանի, քաղաքակարը

թութեան, պատմական պարբերութեան և այն եալին, այլ նա մի մարդկացին իմբի կոչալական գրօշակ է, որի վրայ նայելով իր ժամանակակից ազգութիւն կազմող անհատները, այն է թէ կինը և թէ տղամարդը ցանկանում են ապրել, յառաջադիմել միասին, թէ մտաւորապէս և թէ բարոյապէս ու գոյութեան իրաւունք ունենալ իբրև ինքնաճանանց գիտակցող հեռատես անհատներ, յառաջ բերելով իրանց այսպէս ասած րայուներ մարդկութեան անաշառ գատաստանում:

Մենք այս փոքրիկ աշխատութեան մէջ մասնաւորապէս նաև հայ կանանց մի որոշ սալօնական գասակարգի վրայ խօսելով, միտք չենք ունեցել ամենելին կարծել թէ այդ տեսակին պատմանող բոլոր կանայք անհոգ են դէպէ ազգային շահերը, այլ ընդհակառակը՝ կան շատ և շատ համակրելի ուղղութեամբ ժամանակակից ազգի պահանջների ու կեանքի հայ օրիորդներ ու կանայք, որոնք գիտեն նրա սրբութիւնները յարդել, այն է, լեզուն, գրականութիւնը, աշխարհագրութիւնը, կրօնը, աւանդութիւնները և այլն և այլն: Սակայն և այնպէս, մենք յաւակնութիւն չունենք մտածելու, որ մեր այս փոքրիկ աշխատութիւնը գերծ լինի պակասութիւններից թերեւ և առարկողներ նաև լինին մի քանի կէտերի նկատմամբ:

Յ. ԴՐԱԶԵՆԾՈՅՆ

արական և առաջնություն գործություն մասնաւուն
ուն է պաշտպանական իշխանությունը Այս առաջ-
նաւության մասին պահանջման մասին շահա-
կանական գործությունը առաջնություն ունի առաջ-
նաւության մասին պահանջման մասին շահա-
կանական գործությունը առաջնություն ունի առաջ-
նաւության մասին պահանջման մասին շահա-
կանական գործությունը առաջնություն ունի առաջ-
նաւության մասին պահանջման մասին շահա-
կանական գործությունը առաջնություն ունի առաջ-
նաւության մասին պահանջման մասին շահա-
կանական գործությունը առաջնություն ունի առաջ-
նաւության մասին պահանջման մասին շահա-
կանական գործությունը առաջնություն ունի առաջ-
նաւության մասին պահանջման մասին շահա-
կանական գործությունը առաջնություն ունի առաջ-

նաւության մասին պահանջման մասին շահա-
կանական գործությունը առաջնություն ունի առաջ-
նաւության մասին պահանջման մասին շահա-

Մարդկացին կենցաղավարութեան եղանակները
շատ բազմատեսակ են. մէկը հասարամում է իր բարձր
իրաւունքներով ու դերքով հասարակութեան մէջ և կայ-
ծակի արագութեամբ խրոխտաբար բոմբիւններ արձա-
կում իրանից, իսկ միւսը իրեւ հասարակ ժահկանացու հա-
զիւ կարողանում է իր գոյութիւնը պահպանել յափունա-
կան անդունդի մէջ չըգլուրելու, որով որոշում է նրա
կեանքի ձեւ՝ առաջինից. Ուսումնականը երևակայում
է, որ այսուհետեւ աշխարհս իրան է պատ-
կանում բոլոր իր հրաշալիքներով, որովհետեւ նրա կարծի-
քով նա է միայն ընդունակ իրը թէ օրգանական մար-
մինների մէջ այդ բարձր ու պատկառելի պաշտօնը կա-
տարելու երկրագնդի վրայ. հարթել վերջինիս լեռներն
ու ձորերը, կանոնաւորել գետերն ու գալտերը, հովիտնե-
րը, միացնել լեռնախումբերի կատարները օդի միջից եր-
կաթուղիններ անցներով և այն և այն. իսկ մտաւոր,
հետեապէս և նիւթապէս աղքատը, այն է գիւղացին կամ
գեղջկուկին գրկած անընդունակ է համարեւում այդ յատ-
կութիւններից, որովհետեւ նեղ ուսումնականի կարծիքով,
ինչպէս լիշեցի, միմիայն ինքն է ընդունակ այդ վեհ
մտաւոր կաչմանը հասնելու և երկիւս տէր դառնալու:

Բայց չ՞ որ գիւղացու կամ գեղջկուկու նեարդացին
համակարգութիւնը նոյն յատկութիւնը, նոյն մտաւոր կա-
րողութեան ուժգնութիւնն ունի, ինչ որ նրանն է. չ՞ որ
յիշեալ համակարգութեան մէջ դանազանութեան այն
անդունդը երբէք չըկայ ինչ որ բարձրամիտ խելացին է
կարծում իր օգտի, իր գոյութեան համար, ի վնաս ընդ-

հանուրի մտաւոր կեանքի, որն այդպիսի երաւունքներից գուրի անհատներից է բաղկացած: Եթէ նա ձգտում է եր ուսումնական ֆօրմուլայով նրանց կենցաղավարութեան եղանակը կամ ձեւ կարձել, նեղել, խի երանը ընդարձակել, ենթադրելով, որ աշխարհս մտաւոր հզօրին է պատկանում, բայց չ որ մի այդպիսի միակողմանի կամ բռնազանցօքն (մետափիզիկ) երևակայողը և չարն է գործ դնում իր մարդկային արժանաւորութիւնները: Կենցաղավարական բազմաթիվ եղանակներից ամենասարսափելին, որ կենդանաբանական կեանքի ամմիջական շարունակութիւնն է կազմում, այդ մտաւոր աղքատութիւնն է:

Սմենքը մեզանից խոստովանում են, որ այսօր մեր կեանքի մէջ եթէ զարդարել երկոյթներ կան. այն է՝ թշնամութիւն, ատելութիւն, խարդաւանանքներ (սիրութ), անհամաձայնութիւններ, անհամերաշխութիւն և այլն և այլն, գրանք բոլորը աէստք է վերագրել ժողովրդի մտաւոր աղքատութեանը, նոյն իսկ ոճրագործութիւնն ասած բանը, որ ժոյութիւն ունի մարդկակին կենդանական զարգացման մի օրու ֆազիսից կամ աստիճանից միսամ՝ հետեւանք է եր բիրու կերպարանքով ամբոխի մտաւոր աղքատութեան*:

Սակայն՝ դա այնպիսի մի ճշմարտութիւն է, որ ամեն մի հասարակ մահկանացին յախոնի պիտի մենի, եթէ նրա խիզք ասած բանը միշտ արթուն է և որն ապօռմ է մտաւոր կեանքով, ուստի դրա վրա կրաչ կանգ առնել մենք այս դէպքում անտեղի ենք համարում:

* Այս սեղ ուսումնականը կամ մասնագէտը, որն ապօռմ է ամրոխ մուաւոր կարողութեան ու իրաւունքների էրապլուանացիւայով (Շեռուցաւայթ), սակայն նա ևս ամբոխին է պատկանում, ուրեմն եւ դարձնալ մուաւոր աղքատ, թէ եւ մի բանի ֆօրմուլաները ունի զիմին երևնք սատղեն իշխնելու եւ նրանց անկիւնները չափելու համար:

Ենչ անհատական տարեգներից է բաղկացած ժողովուրդ, կոչւած հասկացողութիւնը, Մենք կարծում ենք, այնքան դժւարին հարց չ լուծելու համար, ի հարկէ տղամարդուց և կնոջից կամ միկ նոյն է՝ կնոջից ու աղամարդուց: Եթէ այդ հայեցուածքը կարեւի է գործադրել մի ժողովրդի համար, նոյնը կարեւի է ասել և մի ազգի կամ հասարակութեան համար, ուրեմն՝ ամբողջ մարդկութեան նկատմամբ, որովհետեւ վերջնո՞ւ այն է, մարդկութիւնը բաղկացած է տեսակ տեսակ ազգութիւններից ու զանազան ժողովրդներից: Իսկ ինչումն է կարանում մարդկութեան մտաւոր ու բարոյական յառաջադարձիմութիւնը, նրա նիւթական բարօր ու խաղաղ քաղաքակրթական վիճակը. պարզ բան է՝ տեսակ տեսակ ազգութիւնների մտաւոր ու բարոյական հզօր յառաջադարձիմութիւնից, որքան շատ է զարգացած կուտուրապէս մի ազգ կամ նոյն է, թէ մարդկութեան մի յառաջադարձական խումբ՝ այնքան աւելի առաջ է ընթանում մարդկային ցեղը ևր ընդարձակ քաղաքակրթութեան լայնածաւալ հանդիսում և աւելի մօտ է վիճում եր բարձր կոէէալին հասնելու, ուրեմն նոյն է՝ թէ ագութեան բարօր վիճակը մարդկութեան բարօր վիճակն է, նրա ազատութիւնը նոյն մարդկութեան ազատութիւնն է: Բայց կաչ այսօր այնպիսի մի անհատ, որ ազգեւութիւնը լինի, չըցանկաւ մարդկային ցեղի յառաջադարձիմութիւնը, կենդանիներից ու զագանեներից զանազաններու համար, նրա բարօր վիճակը, ազատութիւնը, թէ բարյական և թէ նիւթական մտքով վեր առած:

Ներկայ գարուս վերջին շրջանում, այն է՝ 19 դարու վերջին տարբներում ամենաշահանաւոր հրաշակեքներից կամ գիւտերից մէկն էլ այն եղաւ մարդարանութեան կամ գիւտերից մէկն էլ այն եղաւ մարդարանութեան կամ գիւտերից շատ լինի և զարգացած քաղաքակրթութիւնները շատ լինի և զարգացած քաղաքակրթ-

թութեան մէջ՝ այնքան ամբողջ մարդկութիւնը յառաջադարձական կը լինի իւր մտաւոր ու բարոյական կեանքում։ Այդ տէօրէան կամ տէսութիւնը այնպիսի ճշմարտութիւն է գառել, որի մասին մինչև անգամ բարձրամիտ քաղաքագիտութիւնը էլ անգամ չեն տարակուսի։ Մի ազգ՝ որքան իւր անհատների մէջ համերաշխութիւն է մտցնում ու խաղաղ յառաջդիմական կուլուրայի վրայ է դնում իր գործերը՝ այնքան նա գորեղ կը լինի. սակայն ազգերի մտաւոր զարգացումից ու յառաջդիմութիւնից կախած է նրանց գորեղութիւնը ու յաղթանակի փառքը։ Դոքա այնպիսի ճշմարտութիւններ են մարդկային պատմութեան զարգացման մէջ, որ նուրբ քաղաքականութեան մենաօրներն էլ երբէք չեն կասկածի. որովհետեւ ինչ որ բնութեան օրէնքն է ստեղծում, զարգացնում, պատւաստում համաձայն իր բնական յատուկ պահանջներին ահաշառ ու անսխալ բընաւորութեամբ, խորամանկ քաղաքագիտում անզօր է լինում այս դէալում այդ բնական կամ մարդարանական օրէնքի ստեղծւածը, շնածը ոչնչացնել, քանդել ու նլրա բեկորների վրայ խունկ ծխել։ Այսօր նւրովայի Աքպեան լեռների մէջ քարանձաւերում ու ձորերում, խորշերում ու լեռնալին ճիւաղներում, նրա բազմաթիւ լեռնախումբերի ստորոտներում, լանջերում ու մինչև իսկ գագաթներում զանազան ազգութիւններ են գարգանում և բնութեան թագաւոր գառել. լիշեալ լեառների կենտրոնական մասում, որտեղ կարելի է տեղ է կազմում և որը կոչում է Զւեցերիայ՝ ապրում են մարդկութեան մտարապէս ամենալաւաջադէմ, իբրև մի հարազատ ու անկեղծ ընտանիքի անդամներ, չորս տեսակ ազգութիւններ. Փրանսիացիք, լոտալացիք, գերմանացիք և հոլանդացի գաղթականներ։

Նրանցից իւրաքանչիւրն ունի կը լեզուն, իր կը օնքը՝ գրականութիւնը, ազգային աւանդութիւններն ու սովորութիւնը. Սակայն՝ այստեղից պիտի մակաբերել այն՝ որ երկրագնդի ամեն մի կէտը ստեղծում, գոյացնում է եւ անհատներին, իր որդոց՝ իր բնական պայմաններին համապատասխան, այն է տեղագրի, կլիմայի, օդի, բոյսերի, կենդանիների և ուրիշ շատ տեսակ տեսակ հասարակական կեանքի կազմակերպութիւնների, այնպէս որ երկրագնդի ամեն մի երկրամասը իր տեղական որդոցը ստեղծելով կնքում է իր սեփական գորշմով։

Ահա դըանցից է, որ այսօր, 19-րդ դարում մարդկութեան քաղաքակրթութեան ու կուլուրայի յառաջդիմութեան գրուակը Զվիցերիայի ձեռքին է ծածանում. Նրա վրայ է դրոշմած „մտաւոր արագ յառաւ ջաղիմութիւն կոչւած խորագիրը. Խնչակս վերև յաշցինք, համաձայն մարդարանական օրէնքների, այսօր ազգութիւնների զարգացումը մարդկութեան կեանքում այնքան անհարժեշտ է, որքան կարեւոր է նաև մի երկը կամ թագաւորութեան հողը բաժանել իր բնակիչների, երկրագործ դաստիարագի մէջ համահաւասակերպով, այնպէս որ իրեւ անշարժ սեփականութիւն կարուցանան բնակիչները, այդ տէրութիւնը կազմող անհատները օգուտ քայլել և որպէս զի նրանք մշակեն իրանց կտոր կտոր հողերը, ինչպէս հարին է, ամենայն հաւասարութեամբ ու համապատասխան երկրագործական գիոռութիւնների. Այս դէալում պարզ բան է, որ իւրաքանչերը կաշխատի իր կտոր հողն աւելի լաւ մշակել, ու ընծան և տէրութեան համար էլ օգտական գառնալ։

Այսօր Անգլիայում, (Արլանդիայում գլխաւորապէս) Սակսոնիայում, Բէն գետի միջին և ստորին հարթութիւններում ու Բաւարիայում երկրագործութիւնը և Նրա գըրական արդիւնքը տեղական ազգարնակութիւնների հա-

մար այնքան զարգացած է, որ երբէք չի կարելի տեսնել Պրուսիայի Արևելեան մասերում, ուր թագաւորում է հողալին ալիսապետութեան անկենդան միակերպութեմբ, և ուր բացի անօգուտ եղբանից ու ճահճավին գանձան անպէտք բայմերից՝ ոչինչ չի անում։ Այսօր Անգլիայում՝ „Հողալին համայնք“ լույսած միստեմը այնքան է բարգաւաճաւծ ու զարգացած, որ այդ սխստեմի սկզբունքը իբրև մի անհերքելի ճշմարտութիւն մինչեւ անգամ ամենախլառ տօրիները (պահպանողականները) կամ բարձրամիտ լուսերը չեն տարակուսի այդ արդարութեան մէջ և շտափում են ազգայնութեան կամ կը-տոր-կտօր կերպարանք տուլու իրանց հողերին՝ բաժանելով հաւասարապէս երկրադործ դասակարգի մէջ՝ լաւ համանալով, որ ամեն մի ընտանիք այս դէպուտմ աւելի բարձրակի իր բաժինը, քան այն ժամանակ՝ երբ այդ հողերը գտնուէին մի մարդու իշխանութեան տակ. այն է երբ նոքա միաստեսակ կերպարանք ստանալին ու բարձի թողի արած լինէին միամն խոտ մուսցնելու համար։ Ուստի, վերոյիշեալ եղանակով կարելի է բացատրել և ազգութեան գաղափարի զարգանալու օգուտը։ Ուրքան աղթինները ջոկ-ջոկ և իրանց բնական պայմանների մէջ են զարդարում, այնքան նրանք յառաջադիմովական են լինում և մարդկութեան մտաւոր շարժմանը զարկ տալիս Բացի այդ ազգութեան զարգացումը էլի լինչ ամենագլուխը պայմաններից է կախած, գուցէ հայ ընթերցողը հացի զարթացնէ։ Մի ազգութեան զարգացումը ու նրա քաղաքակրթութիւնը կախած է բացի տեղակապայմաններից, որոնք հարկաւ անհրաժեշտ են, այլ նաև նրա անհատներից ու նրանց փոխադարձ ճշմարիտ անկեղծ յարաբերութիւններից։

Անհատ ասելով մենք հասկանում ենք ընդարձակ մտքով վեր առած այդ բառը. այն է թէ աղամարդի և

թէ կնոջ նկատմամբ։ Դրանք ազգութեան գաղափարի կամ իդէալի առաջ երկուսն էլ մի և նոյն համահաւասար իրաւունքներն են վայելում. իրաքանչիւրը նրանցից կարող է եթէ կամենայ այդ իդէալի գրոշակի ծածանմանը առիթ դառնալ Ռևար, կինը նոյն բարօսական կատարելագործւած էակն է, ինչ որ տղամարդը իր բոլոր հոգեկան ընդունակութիւններով, կարողութիւնով ու մանրամասնութիւններով, իսկ եթէ լինում են այդ երկու անհամաների մէջ ֆիզիքական ոյժերի տարբերութիւն՝ այդ արդէն կեանքի համագամանքներին պիտի վերագրել Ի հարկ մի բուգուստի կամ առանձնասենեակի մէջ ապրող կնոջ ոյժերը ոչ մի կերպով հաւասար չեն մի առողք, կայտառ, անվեհեր գեղջիկուհու ոյժերին, որ փոցիւ ձեռին առաւտից մինչև երեկոյ դաշտում ցորեն է դիզում իր մարդու հետ և կամ գութանի համար կերպարուր պատրաստում ու արտը տանում առաւտեան լուսածէգին։

Սակայն, մենք մանրամասնութեան մէջ չենք մանիք քանի որ այդպիսի Փակտերը անթիւ, անհամար են գիւղացի կնոջ կեանքից. այլ կանցնենք կնոջ այն կոչմանը, որ մի ազգութեան մէջ մի և նոյն գերն ունի և որը պարտական է կատարելու ինչ որ տղամարդն է, որովհետեւ կինը նոյնակս անհատ է, իբրև օրդանական մարմիններից ամենագլուխուրը, ամենակատարենալը՝ ինչիքս և մարդը։ Ազգելով հասարակութեան մէջ, կինը կեանք պիտի տայ համայնական զարգացմանը, և մտաւոր ընդունակութիւններին. իսկ այդ յառկութիւնները պիտի որոնել ազգի դրականութեան մէջ։ Ամեն ազգի մէջ գրականութիւնը պարզ հայելի է նրա կեանքի բոլոր երեսովների համար. նրա քաղաքակրթութեան վիճակը, նրա բառաջադարձութիւնը, նրա յետաղիմութեան քայլերը, լացը, կոճը, տանջանքը և այլն, այդ բոլորը նոյն ազգի գրականութեան զանազան շեր-

տերութ պիտի որոնել և դըանք ամենքը կազմում են համայնութեան գոյութեան սխնը, Եւ որովհետեւ համայնութեանը կազմում է ընտանիքնեցից կուլութեապէս և մտաւոր յառաջադիմական մտքով վեր առած և ոչ թէ կենդանաբանական, իսկ ընտանիքի հիմնաքարն է կենը, որ դառնում է այս դէպօւմ համայնութեան գաղափարի հահար երբեւ մի ծանրութեան կենարօն, որովհետեւ այդ ծանրութեան կենարօնի մտաւոր ու բարժական ոյժերից է կախւած և ազգի յառաջադիմութիւնը, նրա նիւթական միջոցներից բարօրութիւնը, սերունդներին կանոնաւոր և մարդկութեան ու ժամանակի պահանջներին համապատասխանող երօք դաստիարակութիւնը Սակայն, այս տեղից կըմակաբերէ հայ ընթերցողը, որ կնոջ վրայ մեծ բարոյական ու անհատական պատասխանատւութիւն կայ համայնութեան ու հաստարակական կարծիքի արդար դատաստանի առաջ, կինը երլու նշանակութիւն ունի մի ազգի բարոյական ու մտաւոր վիճակը որոշելու համար մարդկային միւս խմբեցից, այն է՝ կին կոչւած հասկացողութիւնը ընդհանուր կամ ընդարձակ մտքով վեր առած, իսկ երկրորդը կին բառի հասկացողութիւնը նեղ մտքով վերցրած, ուրիշ խօսքով, կին բառը երբեւ գաղափարական հասկացողութիւն, որի մէջ ամփոփում է նրա վեհ նշանակութիւնը, որպէս բարոյական անդամ հաստարակական կեանքի, իսկ երկրորդ դէպօւմ կինը առարկալական մտքով ըմբռնած, որ ունի միմիսայն մի պաշտօնակատարութիւն, կենդանաբանական անհատ հաստարակութեան համար, վազուց չէ որ նա ստացել է՝ թէ կին դարելում մարդկութեան պատմութեան որոշ շրջաններում Յունաց ու Հռոմայեցոց պատմութեան մէջ կանայք գեր են խաղացել մտաւոր յառաջադիմութեան և գլխաւորապէս քաղաքական լրջաններում, բայց ոչ

այնքան աչքի ընկնող, օժինակ Պերիկլե կինը՝ Ասպազեան և ուրիշները, Խոկապէս կնոջ այդ գաղափարական նշանակութեանը մեծ զարկ տեսց առաջին անգ ամ ֆրանսիան, որ համայնական գաղափարի զարգացման որուահը կարելի է անւանել, ուր բոլոր ազգերի աչքերը յառած այնտեղ են նայում իրեն մի կուլութայի առաջնորդող աստղի վրայ, Ֆրանսիան առաջին անգամ բարձրաց ամիս գրած էր „կնոջ ազատութիւն“՝ „émancipation de femme“, Այդ վեհ ըսկըունքի երգող եղաւ Եթ երկասկրութիւնների մէջ Փօրժանդգր, Յետոյ նոյն վարդապետութիւնը կամ գաղափարը աւելի օրոյ զարգացնան կերպարանք ստացաւ Բաւարիայում, Սակոնիայում ու Ընդհանրապէս Գերմանիայում: Կնոջ մտաւոր յառաջադիմութեան զարգացման և նրա իրաւունքների համահաւասար լինելու շաբունակուզ ու պսակողը՝ գարձաւ Անգլիան, որ ապացուցեց կանանց համար բարձրագոյն ուսումնասաններ, Ճեմարաններ, համարանաններ ու մասնագիտական գալոցներ բաց անելով: Խոկ կնոջ կոչումը առարկայական մտքով վեր առած, մեծաւ մասամբ շատ նեղ է հասկացում նրա նշանակութիւնը, այն է՝ աւելի կենդանաբանական հասկացողութեամբ, որի գլուխութեան ծաւալը շատ նեղ է: Թէկ այս վերջինս, այսինքն կենդանաբանական հասկացողութիւնը, որ կըում է աւելի բնագդական բնաւորութիւն, ունի իր արժամատական պատմառները բընախօսական նուրբ օրէնքների վրայ հիմնած, որոնց մէջ մարդու գիտակցութիւնը շատ քեզ գեր է խաղում, այն էլ միակողմանի կերպով: Բայց այդ օրէնքների անդրադարձական ծայրահեղ գործունէութիւնից նւաստանում է կնոջ վեհ կոչումը ի վնաս նրա քաղաքացիական և մարդկային երաւունքների, ուստի քաղաքակրթութիւնը Եթ բացարձակ նշանակութեամբ բացակայ է վնաս անգամ այս

գէպօւմ, և այդպիսի մարդկային խմբերը համայնութիւն չեն կարող կազմել—բառի բուն նշանակութեամբ, որով հետեւ չի լինի նրանց մէջ ոչ սկզբունքքի համերաշխութիւն և ոչ մէ բարձր եղէալ, մտաւոր և հասարակական կեանքի, ինչպէս օրինակ մի քանի մահմեդական տէրութիւնների մէջ, այն է՝ Տաճկաստանի, Պարսկաստանի և նրանց խաժամուժային խուերում, որտեղ կինը ոչինչ է, եթէ ոչ մի գործիք կամ առարկայ տղամարդկիների ձեռքին. Նա զրկած է բոլորովին իւ հասարակական իրաւունքներից, որ համահաւասար կարող էր վայելել տղամարդկանց հետ, հակառակ դէպօրում կինը անշուշտ մատնւած պիտի լինի անդորրունչութեան, ուրեմն և ստրկական անարգ վեճակի.

Ներկարումն Եւրոպայում և Հիւսիսյին ու Հարաւային Ամերիկայի Միացեալ նահանգներում գիտնականները կնոջ նշանակութիւնը կամ նրա կոչումը հասարակուկան կեանքի մէջ բաժանում են երեք տեսակի. Ա. Երբ տղամարդը վեր է կանգնած կնոջից, նրան տիրում, իշխում է անսահման կերպով, ինչ խազ ասես կնոջ հետ կարող է խաղալ, այնպէս որ կինը իւր բոլոր անհատական իրաւունքներից զրկած կարելի է համարել. թէև նա ապրում է զանազան սույնների ու ուկեայ վանդակների մէջ. Այդ սկզբունքը Պեսսիմեստների * վարդապետութեանը

*] Պեսսիմեստականութիւնը մի վարդապետութիւն է, որ իր սկզբքը առնում է քարոյ եւ շարոյ վարդապետութիւններից, այս է՝ շարի կողմն է պահպանում. Այդ երկու վարդապետութիւնները զարգացան նախ Արեւելքում Հայկա-պարսկական նին քաղաքակրթութեան նոյն քրոյ Որմջին ու Արմի սկզբունքների ազդեցութեան տակ, որոնք մի տեսակ երկու իրար նակառակ շետաներ էին կազմում. Արեւելքում Մագիզմ փորդապետութեամբ, որը մի ամրոցութիւն էր կազմում: Ապա այդ մագիզմը անցաւ Ներքայ Հայութանքների ու մէջ բնուրող, բնուդ վարդապետութեամբ ու որոշ մեր ստացաւ նույնակար բանաստեղծ Բայրոնի

մասամբ համապատասխան է, որի գլուխ պիտի համարեն Գերմանիայի գիտնական Արտուր Շօպէնհաուէրին,

Բ տեսակը, երբ կինը վեր է կանգնած տղամարդուց, Այս դէպօրում առարկայական տեսակէտից նայած կնոջ նշանակութեան վրայ, այն է՝ աւելի նեղ կենդանաբանական հասկացողութեամբ: Այս տեսակի մէջ կինը դառնում է տղամարդի ձեռքին արակչ ասած մի խամաճուկ, մի խաղալիք կարելի է ասել, բայց չաստուածուհու կերպարանքի տակ ծավուած, այնպէս որ տղամարդը ամեն օր նրա առաջ պատրաստ է խունկ ծխել ու նրա հաճոյքներին ինչպէս էլ որ լինի բաւարարութիւն տաք. Ահա այսպիսի վիճակում կինը դառնում է մարդու համար իրեւ մի կուռք, որը բոլորովին գուրի է լինում մտաւոր յառաջդիմական կեանքից: Նրա անհատական բոլոր գործունէութեան ու իդէալական կեանքի վեհ նպատակը սահմանափակւում է և հեղձում իր առանձնաւեճեակում իսկ գրանցութիւնը դիմականդէսներում խնձորք-ներում միայն: Ուստի այս դէպօրում ևս կինը գուրի է երկողումից գաղափարական մտքով վեր առած, իբրև գրեխաւոր նեցուկ հասարակութեան և ազգութեան մէջ: Նա ըստ քաղաքացիական տեսութեան մատնւում է միանգամայն գիտակցութիւնից ու վեհ գաղափարից գուրի անգործունէութեան, ուրեմն մեռելալին ու ստրկական կեանքի: Սակայն, այդպիսի անգործունէութեան վիճակից լինչ հետեւանքներ են յառաջանում ազգութեան մէջ. կնոջ կերպարանք ստացած կուռքը դառնում է ազգութեան համար պատիժ, ցաւ նրա գլխին, որպէս հետեւ դրա նման

երկասիրութիւնների մէջ. իսկ յետոյ աւելի որոշ եւ լիովին կերպարանք սահացաւ Գերմանիայի երեւելի ու բնագավառութիւններու Շօպէնհաուէրի գործերում: Պեսսիմեստական հաճոյքների կայանում է նրանում, որ ազգային պատմութիւնների բան չէ կայ, բացասական կերպարանք ու պատմութիւնների 1922

կենք ինքնուրոյն ասպելու ընդունակութիւն չունի իրեւ գիտակցող անհատ, իրեւ քաղաքացունի, քանի որ նա բոլոր իր օրգանիզմով, թոյլ անբնդունակ արարած է գառնում: Նա ընդունակ չի լինում համեմատաբար իր կանացի ուժին ու բնաւորութեանը՝ մի որ և է աշխատութեան, որով գոնէ կարողանար աղամարդի առօրեայ վատակի մի որոշ մասը լրացնել, այլ ընդհակառակը, նաև, այդ կենդանի խամաճուկը՝ սոխուում է իր տղամարդին հասարակութեան մէջ հարատահարել, անագնիւ միջոցների դիմել, որպէս զի վերջինս գումար ձեռք բերէ իր կուռքին աւելի լաւ ու շքեղ, փառաւոր հանգամանքների մէջ դէ երու, ոսկէ վանդակի մէջ պահելու իր շաստածուհուն ու նրա շուրջը զանազան անուշահոսութիւններով լցնելու: Այդպիսի մտաւոր կեանքից գործի կնոջ համտու նշանակութիւն չունի, թէ իր տղամարդը շատերին կտոր հացից զրկեց, քաղցեց սովամահ մեռցեց աւազակութեան ու գողութեան առելու տուաւ, բանտարկութեան ենթարկեց եւայն և այն, քանի որ այդպիսի կանանց խիզճն ու հոգին, հաւատոն ու հասարակական կեանքի միտումը ապառաժ է դառնում մօղայի ազգեցութեան տակ: Այնուհետեւ պարզ բան է, որ սառչում է անհատների միջի եղած սերտ յարաբերութիւնը, թագաւորում է կեղծաւորութիւն, վերամում է անկեղծութիւնը, տիրում է անարդարութիւն ու նեղ „հսական“ հաճոյքը, անհետանում է ճշմարտութիւն և քաղաքացիական պատիւն ու ազնութիւնը, երեան է գալիս բռնակալութիւն, զօրանում է ժողովրդի աղքատ ու ստրկական վիճակը և որ ամենագլխաւորն է—նրա մըտաւոր ու բարուական անկումը: Ահա այսպիսի հանգամանքներում ուսումնաբանների տւած կրթութիւնը մանուկներին ու նրանց պատւաւոր քաղաքացի պատրաստելուն է, թէ մի կաթիւ ջուր անբարոյականութեան և տգիսութեան ովկիանոսի մէջ: Այս դէսքում կնոջ այդ

տեսակ վիճակը ոչ մի բանի ճման չէ, նա միայն ընդունակ է լաւ ուտել, լաւ հագնել, կօրսէտը ամուս ձգել, որի հետեանքները լինում են զահազան հոգեկան ու նեարդարդակին ցաւեր ու ամբողջ օրը կառքից վեր չըդաւ: Բայց մտաւոր կողմից նրա գիտակցութեան ու զարգացման հօրիզոնը շատ ու շատ սահմանափակ է լինում: այն է ամփոփում է ամենաշատը մի քանի քոնաներով, որոնք հաղլւ մատչելի են լինում նրա ուղեղին և զարգացմանը: Այդպիսի կինը միշտ սպասում է, որ իր տղամարդը սուդակասպասութիւններ կամ համայակասութիւններ անէ, նըրան փառաբանէ, գովէ, շողովորթէ, իսկ կինը այնքան անընդունակ, անհեռատեն է լինում և ինքնահանաչութիւնից գործի միամիտ էակ, որ փոխանակ իր անհատական ու մարդկային պատիւը պահպանելու և գնահատելու, ընդունում է տղամարդու բոլոր հաճուախուաթիւնները իրեւ հալած լրդ և չի կարող հասկանալ, որ մարդի այդպիսի կօմպլիմէնտները, կինջաւորական, փառաբանական խօսքերով իսկապէս նա անպատւում է, արհամարհում է նրա «ես»ը, իրեւ գաղափարական անհատի, իրեւ և համարհատասար իրաւունքի ու ձայնի տէր անձի և քաղաքացուհուց, որովհետեւ այս դէպքում, իրօք կինը ոչ թէ բարձր է կանգնած տղամարդուց, այլ շատ և շատ աստվածաններով ցած, իրեւ սորիսէն, մի խաղալիք մարդու ձեռքին: Սակայն, այդպիսի հանգամանքներում դրա նման սալնի կնոջ վիճակը նոյնն է, ինչ որ նեգրեների վիճակը Աֆրիկայում, այսինքն քաղաքավարի կերպով աւելի վատ տորիութիւն տղամարդի ձեռքի տակ: ուրեմն ուր է մնում կնոջ այն հմանսիացիան կամ ազատութիւն ասած խօսքը: Տղամարդը, օգուտ քաղելով այդպիսի կնոջ մտաւոր թուլութիւնից, որ յառաջացել է շուալլութեան, գեղխութեան, միակողմանի համոյքի ազգեցութեան տակ, նրա վրայ նայում է իրեւ մի ամենա-

թաճկագին զարդարանքի ու խաղալիքի վրայ իր տաճ
մէջ։ Այդ նոր մօդային համապատասխան վարւող ու
հագնող, բայց մտաւոր իդէալից զուրկ ողորմելի էակը,
ոչ մի լուրջ աշխատութեան մտաւոր ու բարյական ար-
գելքների գիմաւորելու և յաղթահարելու ընդունակու-
թիւն չի ունենալ։

Ուստի, այդպիսի կանայք, որոնք միայն ընդունակ են
իրանց տղամարդկերանց համար կուռք դառնալու և շաս-
տուածուհի ու հրճաւանքով սալօններում ամբողջ գիշեր-
ները պարելու ձշմարիս հասարակական կեանքի նկատ-
մաքը վատ օրինակ են դառնում ապագայ սեղնդի կա-
նանց համար, որոնք անշուշտ կ'ալլասեռւին, կապականւին
(degenerer) այս ընթացքով. որովհետև նրանք մատնաւած
են լինում ինչպէս ասացինք մի տեսակ մտաւոր ու աշ-
խատանքի անգործունելութեան, թէև կարողացել են
իրացնել նմանողութեամբ սալօնական կեղծ շարժմունք-
ների սովորութիւնները, կարգերը, վարժունքը, խօսակցու-
թեան տօնք, պարելու եղանակները, կավալերների վրայ
քոնանալը (ԿՈԿԵՏԸՄԵՎՈՒՄ) իրանց հանուքով և այլն Խոկ
այն ինչ նրանց տղամարդկելը, ինչպէս նկատեցինք վե-
րեւում, հազարաւոր գիւղացիների ու հասարակ դասա-
կարգի պատկանող մարդկանց տունը, տեղը, ընտանիքը
քանդում, աւերում են, նրանց միանգամայն զրկելով իրանց
օրւաւ պարէնց, կապիտալների ու բուրժւազական կեանքի
շնորհիւ։ Սակայն, այս երկրորդ տեսակին, կամ գասա-
կարգին պատկանող կանայքը, որոնք ընդունակ չեն ի-
րանց աշխատութեամբ, ինչպէս մարդ գոյութիւն ունե-
նալ հասարակական կեանքի մէջ, այլ միայն շնորհիւ ի-
րանց կեղծ գեղարւեստական գրացիւմների ու գէմքի
թողած տպաւորութեան, կարելի է ասել՝ մի տեսակ պա-
տարաբոյներ են ազգութեան, հետեւապէս և մարդկու-
թեան համար, որովհետեւ այդպիսի անհասաները մտաւու

կեանքի ու ազգային քաղաքակալթութեան մէջ ոչ մի
պաշտօնակատարութիւն չեն կարող ունենալ, բայց կենդա-
նաբանական հասկացողութեամբ վեր առած։ Նա՝ ար-
մավիսի անհատը չի կարող լրացուցիչ մինել տղամարդի ա-
ռօրիեան աշխատանքին, որից մեան կախւած է կնոջ ինք-
նուրոյնութիւնը ու թափեր իրեւ պատւաւոր անհատի։
Ընտանեկան ձշմարիտ գաստիարակութիւնը յանձնուում է,
այս դէպքում զանազան քօննաների, գուվիրնանտկաների
և կասկածաւոր անձնաւորութեանց։

Գալով երրորդ տեսակին կամ կատեգորիային պատ-
կոնող կանանց, որոնք ոչ ցած են կանգնած տղամար-
դուց և ոչ էլ վեր, այլ հաւասար աստիճանի վրայ՝ իրեւ
մարդ, իրեւ անհատ, պիտի ասենք, որ այդ կարգին
պատկանող կնոջ վիճակը, կոչումը ու նշանակութիւնը
հասարակական կեանքի և ազգութեան մէջ արդարու-
թիւն է, որինաւոր եւ մինակ դրաւականն է սրա ձշմարիտ ա-
զատութեան, էմանսիպացիայի ու ապագայ մտաւոր իրօք
քաղաքակրթութեան զարգացման։ Այս վերջին տեսակին պատ-
կանող կինը կատարելացիս կամ լիովին տէր է եւր ան-
ձին, եւր պատւին ու ինքնուրոյնութեանը։ Նա ապրում է
հասարակութեան մէջ ոչ իրեւ խաղալիկ, ոչ իրեւ խա-
մանուկ, ոչ իրեւ զւարձութեան առարկայ, այլ իրեւ
իրաւունքի ու պարտաճանաշութեան տէր անհատ դէպք
համայքը, իրեւ ազգութեան գլխաւոր տարր ու հիմա-
քար կողմող վրկարած էակ։

Սակայն, որտեղից է երկեւմ այդպիսի կնոջ մարդավայել
վիճակը, ինչ բաներումն են երեւում նրա արժանաւոր ան-
հատականութեան ու ազգութեան շահէրին նախանձա-
խնդիր յատկանիշները, նրա ինքնուրոյն ու անկախ վիճակը
հասարակական կեանքում։ կինը բացի Ֆալը լինելուց ընտա-
նեկան շրջանում, որի վրայ մեծ պատասխանաւութիւն
կայ իր մանուկներին գաստիարակութեան, կրթութեան

նկատմածք, այլ նուե դառնում է իր ձեռքի, մտքի աշխատանքով տղամարդի դատած առօրեայ աշխատանքի մեջ մասը լրացնող: Ահա այս կետում, այն է կնոջ ձեռքի հաւալ աշխատանքի մէջն է կայանում նրա անկախութիւնը, ինքնուրոյնութիւնը թէ ընտանիքում և թէ հասարակական ու ազգային կեանքում: Նրա անհատականութեան վսեմ պատիւը, թափալը, իրաւունքը, պարտականութիւնն ու պահանջը աղքի և հասարակութեան նկատմամբ: Ինչո՞ւ, որովհետեւ նրա ձեռքի մաքուր աշխատանքի արդիւնքը դառնում է նրա անկախութեան ու կոչման վսեմութեան ծանրութեան կենորոնք: Այս վեճակում նրա կեանքի գլխաւոր նկատակը կամ իրէալը այն չի մնի, թէ ինչպէս պիտի կաքաւել, tour-անել ժողովարանում վալյ-ի և կադրլ-ի վերաբերմամբ, որոնց համար ամբողջ օրը, համարեա, իրան մաշում է այդ սնուտի ու խաբուսիկ գգացման տակ, այլ հոգ է տանում, թէ ինչպէս իրան օրուայ թանկագին ժամերը պիտի դասաւորէ տան աշխատանքի, որդոց ու աղջիկների դաստիարակութեան համար ^{*}:

* Կարող է գույ մի ժամմասկ, երբ ամէն մի ազգի յատագա սկրունդները իր կրթիւն, կը դաստիարակեն, ոչ թէ գասարանի կիսապաշտօնական չորս պատների մէջ ու ասերէ թւանշանների արժաւիքների տակ զարգանալով, այլ մուտքը կը թութեան ու դաստիարակութեանը տալ բոլորվին ընտանիկան կերպարանը, որը հիմնած կը մնի անփոքութեան, սիրոյ եւ կը թուղ անհատի գլացմանց ու ցանկութիւնների համակատախանող առարկաների նետարրութեան վրայ: Այդ մժիմայն այն ժամանակ երբ մեր ապագայ միամիտ մայերը ամենքը կատարենավէս տիպար կը մնին աւ մամփավարժիք, ուսուցչի ու ծշմարիտ մասնագէտիք բացի հանրակրթական զիտութիւններից: Ներկայում ընտանիկան ծշմարիտ կրթութիւնն ու դաստիարակութիւնը ներուպայում շատ արագ կերպով գարզանում է շնորհարական հասարակական գարզարական համարակալավեռտութեան մէջ, ի վաստ ուսումնա-

Փարիզում կամ աւելի լաւ է վեր առնել ֆրանսիայի կիոն քաղաքում, որտեղ բազմաթիւ հազար ու մի տեսակ մետաքսեայ գործարաններ կան՝ կանայք աշխատումնեն բացի ընտանեկան հոգսերից ու իրանց զաւակների կրթութիւնից, այլ նուե լինեալ միտաքսեայ գործարաններում, որտեղ միմիայն կանայք են աշխատում համայնական կերպով, որոնց միակող ուղարկել լրագիրներ ու ամսագիրներ, որոնք կարգացում են հերթով խումբերի բաժանեած վառման ժամանակակից մերժուայի գլուխ կանդնած նիւթական արդիւնք մատակարաբերով տղամարդու աշխատանքի կիսու, այնպէս որ այդախով ընտանիքի կինը օրւայ պարէնի լրացնող է գառնում, բացի ընտանեկան կանոնաւոր դաստիարակութիւնից, որ նրան է պատկանում: Նա աշխատում է առաւոտեան Դ ժամից կամ ութից մինչև 12 ժամը տանը, իսկ այնուհետեւ գընում է գործարան, մի երկու ժամ էլ այնտեղ է պարագում, իստոյ գալիս է կրկին տուն իրա ոյժերին համապատասխան աշխատանք վեր առնելով իր հետ, որպէս զի տան մէջ ևս աշխատով ճաշից զինի: Հեռու շրգնանք, մեզանում, այն է Երևանեան և Նուշայ նահանգներում հայկանայք նոյնայս աշխատառում են մետաքսեայ գործարաններում, ինչպէս և Փարանիացի կանայքը: Նատեր կան նաև, որ երբէք գործարան չեն յաճախում ամեն օր, այլ վեր են առնում գործարաններուց որոյ քանակութեամբ աշխատանք և շաբաթը մի անգամ գնում են այնտեղ աշրամական դաստիարական տաճ գոլորշիացող ուսման, որովհետեւ այստեղի մայրերը խորին կերպով համոզած են, որ ուսումնակրթութեանը, ոչ թէ նրա համար է, որ պատեստ առնել եւ այնպէս ապրել հասարակութեան մէջ, այլ նրա համար, որպէս զի շրջապատող ընտութեան զաղանիքներն իմանալ եւ ըստ այս յառաջական վննել նրան:

հաստանքի նիւթ վեր առնելու և առաջինի համար նիւթական գարձ առանալու, իսկ այդ աշխատանք բաժանողները և նրա համար գարձատրողները, բոլորը և հարկէ կանայք են: Միով բանիւ, կինը այս դէպքում բոլորովին նեքնուրոյն, անկախ, հարազար էակ ու մայր է դառնում ընտանիքի մէջ, ճշճարիտ գաստիարակչուհի որովհետև նա միւնոյն ժամանակ կրթում է իրան զաւակներին տեղական պահանջներին համապատասխան, քանի որ ինքն էլ լաւ կրթւած կին է: Բայց այս փաստից շըստի մակաբերել, թէ ներոպայում կամ լիօնում կանայք միմիայն մետաքսեաւ գործարաններումն են աշխատանք գտնում: մենք այդ առաջ բերինք իրեւ մասնաւոր աչքի ընկնող փաստ, որ կինը (եթէ ցանկանայ հասարակութիւնը) հասարակական ասպարիզում կարող է աշխատանք գտնել իր մտաւոր ու ֆեզեքական ոյժերի համեմատասխան: Ասացինք մտաւոր ոյժերի համեմատ, այո՞ւ, այժմս կանանց բարձր կըթութեան և նրանց համահաւասար իրաւունքների ու արտօնութեանց մասին, իրեւ պատուարո քաղաքացուհին լուսաւորեալ աշխարհներում ոչ ոք չի կասկածի, դա արդէն մի անխուսափելի կարեք է դառել լուսամիտ ազգերի կենցաղավարական և քաշաքարակիթական շրջաններում:

Այսօր կին բժիշկները կին փաստաբանները սկսած բրիտանական կղզիներից մինչև Իրանի բարձրավանդակը առանց ազգի ու կօնի խորութեան մարդկային սեռի հոգեկան ու ֆեզեքական տեսակ տեսակ ցաւերն են բուժում և հետևապէս մարդկութեան կիանքի բարօրութեան ու յառաջդիմութեան ուժին կերպով ձեռք կառկատում: Այսօր արեմանան ներոպայում, այն է Գերմանիայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Ինգլիայում օր. Լիւտիս քաղաքում Նիկուրիայում և այլն և այլն իրաւաբանական ու բժշկական ասպարիզներում կանայք, կարե-

լի է ասել, միւնոյն համահաւասար իրաւունքներն են վայելում, բացի մի քանի արտօնութիւններից, որոնք շատ հաւանական է, այն ևս շուտով կը ստանան նրանք: Սակայն, մենք աւելորդ ենք համարում այսուեղ մանրամասն ստատիստիկայով ցոյց տալ նպատակից չըշեզւելու համար, իսկ թէ ամեն մի հասարակական կամ ազգային շրջանում կանանց կարելի է տեղ տալ՝ այդ արդէն ապագայի գործ է և կանանց խելամմտութիւնիցն է կախւած:

Խօսելով Լիօնի աշխատառդ կանանց մասին՝ չի կարելի ասել, թէ նրանք բոլորովին հասարակական զւարձութիւններից գուրել են, ընդհակառակի միւնոյն ժամանակ նրանք կլուր էլ են յաճախում, թատրոն էլ, համայնական ժողովներին միշտ ներկայ են լինում և շատ ուրախ ժամեր անցկացնում, բայց ո՞չ թէ խարդաւանանքներով սրանքա անձը դատապիետում: Սակայն, ահա այսպիսի աշխատանքի ու կրթութեան հանգամանքները են կատար առնելով, ընտանիքն ու նրա կիմնաքարը-կինը Փրանսիական ազգի մէջ աւելի ինքնուրոյն ու անկախ են և իրանց կանացի անձին տէր, քան միւս տէրութիւնների մէջ: Այս դէպքում կանանց նկատմամբ, նրանց իրաւունքը և ձայնի վերաբերմամբ երկրորդ տեղը բռնում են Անգլիան ու Շենքարիան: Դարձ նոր աշխարհին, այն է հիւսիսային և հարաւային Ամերիկայի քաղաքական կենացքի կազմակերպութեանը, ուրիշ կերպ նրա լուսաւորութեանը, բարեփոխութեանը, կրթութեանն ու երկրի ազատ հասարակակեառութեանը՝ պիտի ասել որ առաջին հիմնաքարն ու միջնապատճառը կանայք էին: Ո՞վ էր Վաշինգտոնի կինը, եթէ ոչ մի բարի, անկեղծ, լուսամիտ ու երեկի քաղաքագէտ էակ, որ իր քաղաքացի քոյքերին ամեն օր խորհրդի էր հրաւիրում: Ուստի, այնպիսի մի խաղաղ ու համեմատաբար առանց արիւնահեղու-

թեան երերի ճեղքին կեանքի բարեփոխութիւն, որպեսին է ամերիկական բարեփոխութիւնը, պիտի վերագրել մեծաւ մասամբ այնտեղի կանաց խաղաղասէր, նուրբ, կորովամիտ, աննախանձ ու վեհապանձ միտինգներին, որտեղ փոխանակ վառողի ու թենդանօթի գնդակի, թանաքն ու գրիչն էր գործում բարակ քաղաքակրթական փայտուն օրէնքների և գոյութեան իրաւունքի վրա հիմնեած։ Ահա այսպիսի շրջաններում երեւցաւ կնոջ կոչումը ազգութեան մէջ, նրա գերը հասարակական կեանքում և նա լաւ էր հասկացել իր այսպէս առած միսիան այդպիսի հանգամանքներում ու կըթական գործի մէջ։ Նոյնը կարելի է ասել և իսաւացի կանաց մասին Գարեբելի ժամանակ։ Այս դէպում էինքերորդ դարու հայ կինը և իտալուհին կարելի է ասել նոյն դերերն են կատարել հասարակական կեանքում. որովհետեւ երկուսն էլ ժողովակալը կրանց անձերը՝ հասարակական շահերին, կեանքի, խղճի ու կրօնի ազատութեան էին նէրւած և ոչ ժամանակակից քնքուշ սեռի այս առանձնասենեակի ու անգործունքնութեան մատնած։ Նրանք, երբ իրանց տղամարդիկը Խուժաստանի բանտերութն էին տնքում, իրանց կանացի ձեռքի հալալ աշխատանքով ամբողջ որբացած ընտանիքը կառավարում, կըթում ու լուսաւորում և գեռ աշխատանքից սուսացած արդիւնքի մի մասն էլ բանտարկեալներին էին ուղարկում. Յէտագայում, Ֆրանսիայում կատարւած պատմական նշանաւոր երկոյթներն ոչինչ էին, եթէ ոչ ամերիկական կետնքի բարեփոխութեան արձագանք, թէկ բիրս ու արիւնահեղ կերպով։ Այս ժարդիկային աչքի ընկնող պատմական փաստում կանադա փայլեցին իրանց վեհ, գաղափարական անհատապն ու արտիկան բուժեան ամամար համար հասարակական կեանքի ու նրա գարգաղման շահերը աւել աւելում է այն։

Միով բանիւ Փրանսիական կանադա և թէ լուսաւորութեան գործում և թէ ուրիշ շատ բաներում պակաս դեր չեն ունեցել. Սակայն, այդ պատմական երկոյթները ցայց են տալիս փառաւոր կերպով, թէ լինչ գեր են ունեցել և ինչպէս են խաղացել իրանց գերեզը այն ժամանակաւոյ կանայք։

Նրանք իրանց կոչումը տեսել են ժողովրդի լուսաւորութեան ու դաստիարակութեան մէջ. իրանց բարձր իդէալը ունեցել են հասարակական կեանքի կանոնաւոր զարգացման ու ժուարոր առաջադիմութեան գործում։ Ահա, այսպիսի վիճակում միայն որշուում է կնոջ կոչումը, պարտաւոր գերբը, նրա վիճակը և լիովին նշանակութիւնը հասարակութեան մէջ ու համայնութեան գաղափարի առաջ։ Իսկ ընդհակառակը շատ երկներում, ուր կինը զրկւած է հասարակական ընդարձակ իրաւունքներից և սահմանափակւած ընտանեկան նեղ կեանքի մէջ՝ նա երեսում է երեւ պահպանողական անդամ հասարակութեան մէջ. այդ հետեւում է նրանից, որ կինը գերդատանի մթնոլորտում որպոց և զաւակների տէր լինելով, պարզ բան է, որ նրանց բախտի և ապագայ վիճակի վրայ է մտածում. միայնակս այնպէս, որ հասարակական շահերը այս գէպքում նրա համար կարելի է ասել երկրորդական, գուցէ երրորդական տեղ են բռնում, ուստի, երեւան է գալիս մի տեսակ անկենդանութիւն ու անշարժութիւն դէմակի ընդհանուրը, համայնքը և այն։ Կինն սպարում է միայն իր նեղ ընտանեկան չորս պատի մէջ, նրա սահմանափակ աշխարհով, իր մասնաւոր «ես»-ով, եր հոգմերով, ախով ու վախով։ Համարեա նոյն վիճակին է ենթարկում և նրա տղամարդը, որ գուցէ իր երիտասարդութեան ժամանակ հասարակական և ազգային շահերը իր սրտին շատ մօտիկ լինէին, բայց երբ որ գերդատանի տէր է գառնում, նա լինում է այնուհետև նեղ,

եսական մէ աճհատ, հեղձւում է ընտանելիան հոգսերի մէջ, այնպէս որ հասարակական կազմակերպութեան և նրա յառաջադիմութեան դրօշակի վրայ շատ ուշ-ուշ ու երբեմնակի է նայում: Սակայն, կինը առիթ է մինում նրա անշարժութեան և յետադիմութեան գարգացմանը, ուստի և անխուսափելի է սրանից մէ ազգի յետադիմութիւնը՝ նայերով, թէ կինը ինչ բարեհասնութիւններով է օժտւած: Ոենք որպէս զի չերկարացնենք մեր խօսքը կնոջ կոչման մասին դէպէ ազգութիւնը, քանի որ դա կարելի է ասել, մի առանձին գրականութիւն է կազմում մարդկալին պատմութեան մէջ, կարեւոր ենք համարում երկու խօսք նաև ասել հայ կնոջ վերաբերմամբ մեր հասարակական կեանքում: Եւլուսական գրականութեան մէջ, մասսամբ մի աճնեթեթ կարծիք է տարածւած թէ՝ «Արեւելքում կինը ստրուկ վիճակի մէջ է»: ուժեմն և հայ կինը, որ կարելի է ասել արևելեան ազգերի մէջ ապրում է մի աճնակի լեռնոստ երկրում, որին կարելի է անւանել արևելեան Նեցարիա, այն է՝ Հայաստանը և ըլուսալին բնակիչներով, իր բարեհմասնութիւններով ու բնութեամբ լիովին համապատասխանում է արևեմտեան Եւրոպայի Նեցարիային, թէև կըմութեան կողմից վերջնա շատ և շատ բարձր է: Բայց ընդհակառակը, հայ կեանքում հասարակ ու միջին դասակարգի շերտերում կնոջ վիճակը աւելի ինքնուրոյն, անկախ ու մարդութայիւն է քան վերին լազարական կամ սալօնական շերտերում, որտեղ ժամանակակից կապտավխուների սալօնական մօդային են իրանց զոհում և նրա կենցաղավարական մնոտի աւելի պատճէնը վեր է առնում տանից փախչելով, բոլորովին անգիտակցօրէն կերպով: Մենք ասացինք, որ հայ կինը ստորին և միջին դասակարգերում աւելի ինքնուրոյն, աւելի անկախ, աւելի ազատ ու ազնիւ է, ուրեմն աէը անհատականութեան, իր «ես»ի, իր պատ-

ւի, թասիսկի և աւելի առողջ քան վերին աճմիտ, ուզդութեամբ մոլի խաօտիկական շրջանում: որովհետև առաջին երկու դասակարգերում, հայ կնոջ անկախութեան, ինքնուրոյնութեան վեհ գաղափարը հիմնուում է այն տեսութեան և այն վարդապետութեան վրայ, որ նա հաւասար կերպով աշխատում է իր տղամարդի հետ, աւելի անձնատուր է իր որդոց ու զաւակների և ազգային անհրաժեշտ դաստիարակութեանը, նրանց կըթութեանը, որ իրանց կեանքի հետ համապատասխանում է քիչ թէ շատ, քան թէ վերին դասակարգում, որտեղ կըթութեան գործը գլխովին կարելի է ասել անբնական հողի վրայ է զարգանում առանց ուղղութեան ու անկայիւ կերպով *: Դրանք, այդ վերին սալօնական կարգի ու կաստայի պատելի կանայք, ի շարեգործ գնելով մի ազգի գոյութեան օրինականութիւնը՝ «не въ обиду сказать, ссыпали звонъ», но не знаютъ гдѣ онъ»: Խոկ ընդհակառակը, հայ հասարակական կեանքի ստորին շերտերում (գլխզերում օրինակ) մինչև իսկ տղամարդուց էլ շատ է աշխատում ու գործում հայ կինը. ահա հէնց այս դէպում նա գտոնում է, կարծէք, տան տէրը, տան տղամարդը: Ուստի, նա աւելի մօտ է այն գաղափարին, որ կոչում է ազատութիւն կամ էմանսիպատիօն կնոջ, քան մի սալօնական կին, որովհետև այդպիսի կինը միայն հաճոյախօսութիւններով է կրտացնում իր հոգին, իր խելքը, իր զգացմունքները և այլն: Ահա, այս վերջին դասակարգին պատկանող

* Որովհետև այժման մանկավարժական գիտութիւնը պահանջում է, որ մանուկը իր ծնւելու օրից՝ նախ պիտի զարգանայ, մնակ ու դաստիարակի իր ազգային կամ մայրենի լեզուի: Պակայն, այդ կերպով միայն ընականաբար կատարում են մանուկի ուղղի կանոնաւոր զարգացումը, երեւակարութեան հանդէսը եւ նրա առողջ դաստողութեան ու սուր դիտողութեան ընդունակութիւնները յետագայում:

հայ կանալք կըում են մի տարօրինակ բնաւորութիւն
և գոյն, որ զուրկ է խօսիսկան հայ կնոջ առաքինի յատ-
կանիշներց որովհետեւ դրանք, խօսպէս առած ոչ հայ
տիպարի են նման, ոչ էլ խօսմուների, որովհետեւ
նրանց արեան բնաւորութիւնը անշուշտ իք բողոքէ
բնախոսութեան օրէնքի ու տեղական պայմանների
դէմ, ուստի, այս հանգամանքում գէւարին է միջև
անգամ մի լուրջ կըսակիալ ենթարկել. Մեր խօսքը
ընդհանուր բնաւորութիւն ունի, բայց պիտի խօսովա-
նել նմակ, որ ներկայումս և այդ վերին շջաններումն,
էլ համարելի, վեհ կանալք շատ կան. Սակայն,
եթէ այսպէս շարունակի այդ դասակարգի գաղա-
փարից զուրկ, անսկզբունք ընթացքը, այն ժամա-
նակ մենք շատ տիսուք կետեանքների պիտի հասնենք
ընտանեկան անհարազատ դաստիարակութեան, ան-
գործունէութեան, մեռելալին կեանքի ու անշահարերու-
թեան շնորհէւ. որովհետեւ դրանք, իրքն մտաւորապէս
աւելի բարձր զարգացած տարրեց ազգութեան մէջ, ինչպէս
ֆրանչայի, Նևցարքայի և Ամերիկայի կանանցից, նոդ-
հակառակը կորցնում են իրանց հայկական անհատակա-
նութեան ազնիւ յատկանիշներն ու ճշմարտ կանացի
կոչումը մեր հասարակական կեանքում:

Բայց ընդհանրապէս սիմի ասել, որ հայ կենը թէ
գեղեցկութեամբ և թէ իր բոլոր բարեմանութիւն-
ներով տիպար է այն վեհ գաղափարական մտքով վեր
առած առաքինի յատկանիշներով օժտուած ազատ կնո-
ջը, որին ներկայումս ձգտում է եւրոպական բար-
ձր քաղաքակրթութիւնը, նա, կարելի է ասել, մի
ֆրանչական աշխատարկ, ազնիւ ու տնարար կնոջ բարո-
յական առանձնա յատկութիւններն է կըում իր վրայ, ո-
րոնք յառաջանում են միմիայն կլիթութեան ու բարձր
ճշմարտ լուսաւորութեան ազդեցութեան տակ: Սակայն

արև ելքում հայ կենը չընայելով իրան շջապատող շատ
աննպաստ նեղ հանգամանքներին, կիսակերպ ու թափա-
ռաշջիկ հարեան ազգերի ունեցած պատմական բացա-
սական հետեւանքներին, դարձեալ կարելի է ասել հա-
մարձակ կերպով, որ նա օրինակ կարող է դառնալ իր
առաքինի, վեհ ու անկեղծաբար կեանքով թէ Արե-
մուտքի և թէ Արևելքի շատ ազգերի կանոնաւոր հասա-
րակական ու ընտանեկան կեանքի համար: Ներկայու-
թը Արևելքում հայ կնոջ լուկալը աշխատութեան, կը-
թութեան, ազգային լուսաւորութեան ու յառաջադիմու-
թեան մէջն է, որից կախւած է անշուշտ և նրա ազա-
տութիւնը:

Ա Ե Բ Զ



7/11/1922

Ա. ԱՅՎՈՂԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՌԱՐԱՐ

ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Մեր Լեռնցիք, տոհմական պատկեր (սպ.) 10 կ.
2. Կնոջ կոչումը եւ դրութիւնը հասարակութեան մէջ, զինն է 10 կ.

Պատրաստ է տպագրութեան համար

3. ԶԵՅԹՈՒՆԳԻՆԵՐ (տոհմագրական պատկեր):

2013

87387



